ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«04» ապրիլ 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ԳԲԽ-36/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև՝ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Պրոթերմ» ՍՊԸ-ի 21.03.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Պրոթերմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 21.03.2017թ. բողոքով հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու կամ «ՀԱԷԿ» ՓԲԸ)

կարիքների համար գլխավոր մասնաշենքի 2-րդ բլոկի 5,4 նիշում մալուխային կիսահարկի հատակների ջրամեկուսացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 10.03.2017թ. կազմակերպվել է «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին հայտ են ներկայացրել չորս ընկերություններ՝ «Պրոթերմ», «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ», «Մաքոն», «Հատուկէներգամոնտաժ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գանհատող հանձնաժողովի 10.03.2017թ. նիստից հետո «Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրենի պահանջով տրամադրվել են մասնակիցների գնային առաջարկները և տուժանքի մասին համաձայնագրերը, որտեղ, ըստ Ընկերության, ակնհայտ երևում է, որ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն տուժանքի մասին համաձայնագրի մեջ չի լրացրել ամիսը և ամսաթիվը, որը հիմք է հայտը անբավարար գնահատելու համար: Չնայած վերոգրյալի՝ հայտը գնահատվել է բավարար:

16.03.2017թ. «Պրոթերմ» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով դիմել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին հետևյալ բովանդակությամբ նամակով. «...խնդրում եմ Ձեզ տրամադրել ինձ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի հետևյալ մրցույթների («ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-11/17», «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17») որակավորումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ պայմանագիր, կատարողական ակտ և այլն...»: Նույն օրը ստացվել է պատասխան հետևյալ բովանդակությամբ. «...Ի պատասխան Ձեր դիմումի՝ տրամադրվում է «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-11/17» և «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրերով ընթացակարգերի մասնակից «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից որակավորման գնահատման նպատակով ներկայացված պայմանագրի, լրացուցիչ համաձայնագրի և կատարողական ակտերի պատճենները՝ կազմած 12 էջից:»: Վերը նշված պայմանագրի համարն է N05/465, որը կնքվել է 25.07.2014թ. և իր նպատակային բովանդակությամբ հանդիսանում է լցովի հատակների աշխատանքների կատարման պայմանագիր:

«ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով ընթացակարգի հրավերի համաձայն մասնագիտական փորձառության չափանիշը գնահատվում է բավարար, եթե նա հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ

ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նմանատիպ է համարվում հատակների ջրամեկուսացման աշխատանքները:

Այս առումով Ընկերությունը գտնում է, որ աշխատանքների նմանատիպության առումով ակնհայտ է դառնում, որ վերը նշված աշխատանքները չեն կարող համարվել նմանատիպ, սակայն հանձնաժողովը իր 17.03.2017թ. թիվ 3 որոշմամբ որակավորումը գնահատել է բավարար:

Ընկերությունը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ վերը նշված սխալները հանդիսանում են օրենքի տառի և պահանջի խախտում, հանձնաժողովը անտեսել է իրավական ակտի պահանջը և գնահատել բավարար:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Ընկերությունը վկայակոչել է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ անհատական ակտ է նույն հոդվածի առաջին մասում նշված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների (այսուհետ՝ անձ) համար:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Ընկերությունը գտնում է, որ հրավերը և հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները (արձանագրության տեսքով) համարվում են անհատական իրավական ակտ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: Իրավական ակտերում չի թույլատրվում հնացած և բազմիմաստ բառերի ու արտահայտությունների, պատկերավոր համեմատությունների, այլաբանությունների, չափազանցությունների, փոխաբերական իմաստով բառերի կամ արտահայտությունների, թաքնված ենթատեքստերի, ինչպես նաև օտարալեզու տերմինների անհարկի օգտագործումը: Իրավական ակտում բազմիմաստ բառ օգտագործվելու դեպքում պետք է սահմանվի, թե բառը որ իմաստով է օգտագործվում:

Նույն օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Ընկերությունը վկայակոչել է նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ մասը, որի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը...:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման հավելված 3-ով հաստատված «Գնումների միասնական անվանացանկի (ԳՄԱ) կառուցվածքի» 2-րդ կետի 1-2-րդ ենթակետերի համաձայն՝ հիմնական անվանացանկն ունի ծառի կառուցվածք և կազմված է մինչև ութ նիշ ունեցող ծածկագրերից, որոնք կապված են պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը նկարագրող բառերի հետ: Թվային ծածկագիրը բաղկացած է 8 նիշից և բաժանված է հետևյալ կերպ՝

1) առաջին երկու նիշերը ցույց են տալիս բաժինը (XX000000).

2) երրորդ նիշը ցույց է տալիս խումբը (XXX00000).

Կարգի 69-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Պատվիրատուի 2017թ. գնումների պլանի մեջ «լցովի հատակներ» առարկան նշված է 45431100/1 և 45431100/2 CPV կոդերի տակ, որոնց առաջին նիշը ցույց է տալիս նմանատիպության խումբը, իսկ ջրամեկուսացման աշխատանքները, չնայած այն հանգամանքին, որ գնումների պլանում CPV կոդը նշված չէ, այնուամենայնիվ, եթե նշվեր համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 10.10.2013թ. թիվ 896-Ն հրամանի հավելված 5-ի՝ ջրամեկուսացման աշխատանքների համապատասխան CPV կոդն է՝ 45261310:

Ընկերությունը գտնում է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2017թ. թիվ 2 արձանագրությամբ և 07.03.2017թ. թիվ 3 արձանագրությամբ թույլ են տրվել իրավական կոպիտ խախտումներ: Փորձ է արվում խեղաթյուրել և յուրովի մեկնաբանել իրավական ակտերի բուն իմաստը և նշանակությունը:

Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին բողոքով խնդրել է՝

1. Որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգը և (կամ) պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կողմից «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի շրջանակներում կայացված ցանկացած այլ որոշման գործողությունը, որը Խորհրդի 27.03.2017թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

2. Դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գլխավոր մասնաշենքի 2-րդ բլոկի 5,4 նիշում մալուխային կիսահարկի հատակների ջրամեկուսացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2017թ. թիվ 2 արձանագրության այն կետը, որով «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

3. Դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գլխավոր մասնաշենքի 2-րդ բլոկի 5,4 նիշում մալուխային կիսահարկի հատակների ջրամեկուսացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2017թ.

թիվ 3 արձանագրությամբ կայացված այն որոշումը, որով «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է համապատասխան հրավերով սահմանված որակավորման չափանիշին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-36/17 բողոքը քննող հանձնաժողովի 27.03.2017թ. ժամը 17:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն), որպես ԳԲԽ-36/17 բողոքի քննության ընթացքում ներգրավված երրորդ կողմ, 27.03.2017թ. թիվ 09 գրությամբ հայտնել է, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Կազմակերպության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը ճիշտ են և բխում են ՀՀ օրենսդրության և քաղաքաշինության նորմերի պահանջներից:

Կազմակերպության կողմից 25.07.2014թ. թիվ 05/465 պայմանագրով իրականացվել է են լցովի հատակների կատարման աշխատանքներ, որը իրենից ներկայացնում է ավելի բարդ և որակյալ հատկանիշներով աշխատանք, քանի որ օգտագործվում է էպոքսիդային հիմքով, մոդիֆիկացիոն հավելումներով որակյալ նյութ, որը նաև հանդիսանում է ջրամեկուսիչ:

Այդ նյութի հատկությունները հավաստվում են մատակարարի կողմից ներկայացված որակավորման Տ.Պ.Հ.Հ. 00209987.1669-99 սերտիֆիկատով, որը կից ներկայացվել է:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ ներկայացված պայմանագիրը նմանատիպ չէ, ապա Կազմակերպությունը հայտնել է, որ այդ աշխատանքները նմանատիպ են և դրանց կատարման ցիկլերը նույնն են:

Ընկերությունը 30.03.2017թ. թիվ 12 գրությամբ ներկայացրել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» և լցովի հատակների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-11/17» ծածկագրերով ընթացակարգերի ծավալաթերթ-նախահաշիվները և հայտնել, որ դրանց համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված աշխատանքները համանման են:

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-36/17 բողոքը քննող հանձնաժողովի 27.03.2017թ. ժամը 17:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է, որ բողոքն անհիմն է, քանի որ լցովի հատակների վերանորոգման աշխատանքները իր մեջ ներառում է նաև դրանց ջրամեկուսացման աշխատանքները, հետևաբար դրանք համանման են:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 23.03.2017թ. գրությամբ հայտնել է, որ «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նմատակով հայտ են ներկայացրել չորս մասնակից՝ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն, «Պրոթերմ» ՍՊԸ-ն, «Մաքոն» ՍՊԸ-ն և «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն:

1. «Մաքոն» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար, քանի որ փաթեթում առկա փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես, գնային առաջարկը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին և չի ներկայացվել հայտի ապահովումը, ինչպես նաև փաթեթում չի ներկայացվել հրավերով սահմանված փաստաթղթերի 2 օրինակ պատճենները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, քննարկելով «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթը, նկատել է, որ հրավերի 9-րդ հավելվածում՝ տուժանքի մասին համաձայնության մեջ լրացված չէ ամիսը և ամսաթիվը:

Հաշվի առնելով, որ նախկինում փաթեթով պահանջվող յուրաքանչյուր փաստաթղթում լրացվում էր ամիսը, ամսաթիվը, սակայն հետագայում փոխվեցին ձևաթղթերը և ՀՀ ֆինանսների նախարարությունը գնումների գործընթացն կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևերից այն հանվել է, ինչպես նաև հայտը ներկայացնելու օրը համարվում է հայտերի գրանցամատյանում գրանցելու օրը, հանձնաժողովը գտել է, որ մասնակցության հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան և գնահատել է բավարար:

3. Հայտերի բացման նիստում մասնակիցների կողմից առաջարկվել են հետևյալ գները (առանց ԱԱՀ)՝

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ- 7 912 667 ՀՀ դրամ

«Պրոթերմ» ՍՊԸ- 7 950 000 ՀՀ դրամ

«Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ- 7 925 400 ՀՀ դրամ:

Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հետ 25.07.2014թ. կնքված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի օբյեկտների լցովի հատակների վերանորոգման աշխատանքների գնման թիվ 05/465 պայմանագիրը: Հանձնաժողովը քննարկելով ներկայացված փաստաթղթերը, հաշվի առնելով գնման առարկայի առանձնահատկությունները՝ այն է.

-մաքրում մետաղական խոզանակով - մ^2 -1700

-փոշեհեռացում – մ^2 -1700

-բետոնե հատակի ամրացնող տոգորում «Ակվաստոուն» կամ համարժեք նյութով - մ^2 – 1700

-մակերևույթի նախաներկում «Ակվապոլ» կամ համարժեք նախաներկով- մ^2 -1700

-մակերևույթի ներկում «Ակվապոլ» կամ համարժեք նախաներկով - մ^2 -1700

ինչպես նաև «ԳԻՊԿ» ՓԲԸ-Ի 20.03.201թ. որակի հավաստագիրը, որի նպատակը տողում հստակ նշված է, որ լցովի հատակները նախատեսված են շինկոնստրուկցիաների ջրամեկուսացման նպատակով, վերը նշված պայմանագիրը գնահատվել է բավարար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-36/17 բողոքը քննող հանձնաժողովի 27.03.2017թ. ժամը 17:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր

ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲԽ-36/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-36/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գլխավոր մասնաշենքի 2-րդ բլոկի 5,4 նիշում մալուխային կիսահարկի հատակների ջրամեկուսացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով ընթացակարգը:

2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում **հատակների ջրամեկուսացման** աշխատանքների կատարումը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը):

3. Ընթացակարգի հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար լիցենզիա չի պահանջվել:

4. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի թիվ 1 հավելված՝ ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել են հետևյալ աշխատանքները.

- ***Մաքրում մետաղական խոզանակով,***
- ***Փոշեհեռացում,***
- ***Բետոնե հատակի ամրացնող տոգորում «Ակվաստոուն» կամ համարժեք նյութով,***
- ***Մակերևույթի նախաներկում «Ակվապոլ» կամ համարժեք նախաներկով,***
- ***Մակերևույթի ներկում «Ակվապոլ» կամ համարժեք ներկով:***

5. Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել «Պրոթերմ», «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ», «Հատուկէներգամոնտաժ» ՍՊ ընկերությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2017թ. թիվ 2 արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն, որը սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

7. «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 25.07.2014թ. կնքված թիվ 05/465 («ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-22/14») աշխատանքների գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր): Պայմանագրին կից ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել է կատարել հետևյալ աշխատանքները.

- Հին լաքապատ մակերևույթի ապամոնտաժում,
- ***Մաքրում մետաղական խոզանակով,***
- ***Փոշեհեռացում,***
- ***Նախապատրաստական շերտի իրականացում ԳԻՊԿ-ԷՊՊ-11-42 կազմով՝ 2 շերտ:***

8. «ԳԻՊԿ» ՓԲԸ-ի կողմից տրված որակի հավաստագրի համաձայն՝ ***ԳԻՊԿ-ԷՊՊ-11-42 ապրանքանիշի լցովի հատակը նախատեսված է շինարարական կառույցների և կառուցվածքների ջրամեկուսացման համար:***

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2017թ. թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատվել են բավարար:

10. ՀՀ ԿԱ «Քաղաքաշինության պետական կոմիտե» գործակալությանը ուղղված 17.03.2017թ. նամակով Է. Չատինյանը («Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրեն) խնդրել է հայտնել հետևյալը՝

- արդյոք լցովի հատակի կատարման աշխատանքները և ջրամեկուսացման աշխատանքները համարվում են նմանատիպ, թե ոչ,
- լցովի հատակի աշխատանքի կատարման համար պահանջվում է արդյոք լիազոր մարմնի կողմից տրված շինարարական լիցենզիա, թե ոչ,
- ջրամեկուսացման աշխատանքների կատարման համար պահանջվում է արդյոք լիազոր մարմնի կողմից տրված շինարարական լիցենզիա, թե ոչ:

11. ՀՀ ԿԱ «Քաղաքաշինության պետական կոմիտե» գործակալությունը 21.03.2017թ. թիվ 22/22.1/1435-17 գրությամբ հայտնել է, որ դիմումի մեջ նշված ջրամեկուսացման և լցովի աշխատանքները նմանատիպ չեն:

Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները, որոնք պահանջում են շինարարության թույլտվություն, սահմանվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված աղյուսակի 17-րդ կետով, իսկ համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման թիվ 4 հավելվածով հաստատված ցանկի՝ շինարարության թույլտվություն չպահանջող ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, բարեկարգման և այլ շինարարական աշխատանքները լիցենզավորման ենթակա գործունեություն չեն համարվում:

12. Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն հայտի թիվ 9 հավելվածով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի մեջ ամիսը և ամսաթիվը չի լրացրել:

13. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2017թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետով «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար, իսկ նույն արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն ճանաչվել է երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից:

5. ԳԲԽ-36/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Պրոթերմ» ՍՊԸ-ի 21.03.2017թ. բողոքը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 23.03.2017թ. և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ի և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով

նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: ***Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեութ-յան տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:***

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ նմանատիպ են համարվում **հատակների ջրամեկուսացման** աշխատանքների կատարումը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը):

Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար լիցենզիա չի պահանջվել:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի թիվ 1 հավելված՝ ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել են հետևյալ աշխատանքները.

- ***Մաքրում մեխանական խոզանակով,***
- ***Փոշեհեռացում,***
- ***Բետոնե հատակի ամրացնող տոգորում «Ակվաստոուն» կամ համարժեք նյութով,***
- ***Մակերևույթի նախաներկում «Ակվապոլ» կամ համարժեք նախաներկով,***
- ***Մակերևույթի ներկում «Ակվապոլ» կամ համարժեք ներկով:***

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 25.07.2014թ. կնքված թիվ 05/465 («ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-22/14») աշխատանքների գնման պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել են հետևյալ աշխատանքները.

- Հին լաքապատ մակերևույթի ապամոնտաժում,
- ***Մաքրում մեխանական խոզանակով,***
- ***Փոշեհեռացում,***
- ***Նախապատրաստական շերտի իրականացում ԳԻՊԿ-ԷՊՊ-11-42 կազմով՝ 2 շերտ:***

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ԳԻՊԿ» ՓԲԸ-ի կողմից տրված որակի հավաստագրի համաձայն՝ ***ԳԻՊԿ-ԷՊՊ-11-42 ապրանքանիշի լցովի հատակն ունի ջրակայունության բարձ մակարդակ, նախատեսված է շինարարական կառույցների և կառուցվածքների ջրամեկուսացման համար, այդ թվում նաև՝ լողավազանների ներքին մակերեսների համար:***

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախահաշիվ-ծավալաթերթի և «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Պայմանագրով նախատեսված աշխատանքների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք նույնատիպ են (համանման): Այսպես, Ընթացակարգը հայտարարվել է Պատվիրատուի գլխավոր մասնաշենքի 2-րդ բլոկի 5,4 նիշում մալուխային կիսահարկի ***հատակների ջրամեկուսացման*** համար: Կազմակերպության կողմից ներակայացված լցովի հատակների կատարման աշխատանքների Պայմանագրով կատարվել են նաև այն աշխատանքները, որոնք ներառված են Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախահաշիվ-ծավալաթերթի մեջ ***(հատակի մաքրում մեխանական խոզանակով, փոշեհեռացում):*** Միևնույն ժամանակ նույն նախահաշիվ-ծավալաթերթով նախատեսված է մակերևույթի ներկում «Ակվապոլ» կամ ***համարժեք*** ներկով: Կազմակերպության կողմից առաջարկվել է ***ԳԻՊԿ-ԷՊՊ-11-42 ապրանքանիշի լցովի հատակը,*** որը «ԳԻՊԿ» ՓԲԸ-ի կողմից տրված որակի հավաստագրի համաձայն՝ ***ունի ջրակայունության բարձր մակարդակ և նախատեսված է շինարարական կառույցների և կառուցվածքների ջրամեկուսացման համար:***

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: ***Հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:***

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված Պայմանագիրը հանդիսանում է նմանատիպ (համանման), քանի որ Պայմանագրով և Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախահաշիվ-ծավալաթերթով նախատեսված աշխատանքների էական մասը համընկնում է և դրանք, ըստ էության, դասվում են

տնտեսական գործունեության նույն խմբին: Հետևաբար Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուն «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Պայմանագիրը գնահատելով բավարար, գործել է իրավաչափ, ուստի բողոքը սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

2. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 9 հավելված՝ տուժանքի մասին համաձայնագրի մեջ չի լրացրել ամիսը և ամսաթիվը:

Չնայած այդ հանգամանքին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.03.2017թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետով «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար, իսկ նույն արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն ճանաչվել է երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից:

Գտնում ենք, որ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատելով բավարար, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ ***հայտի ապահովումը,*** իսկ նույն Կարգի 45-րդ կետի համաձայն՝ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված ***հայտի ապահովումը շտկման ենթակա չէ:***

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության ներկայացրած բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման, ուստի ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում ենք բողոքը մասնակի բավարարել՝

1. դադարեցնել «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2017թ. թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը.

2. «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխան գնահատելու վերաբերյալ «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-12/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2017թ. թիվ 3

արձանագրությամբ կայացված որոշումը դադարեցնելու պահանջի մասով բողոքի պահանջը մերժել:

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-36/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան